

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2013 թվականի

թիվ 8/7

քաղ. Մոսկվա

**Ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եւ անձանց
ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկը եւ դրա կիրառման
կարգը հաստատելու մասին**

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները
եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկը (հավելված
թիվ 1):

2. Հաստատել ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները
եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների կիրառման կարգը
(հավելված թիվ 2):

3. Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՌԿԵԼՕՀ, Բ. Վ. Շկուրկին), Բելառուսի
Հանրապետության ՊՄԿ-ին (ՄՀԿՎ, Վ.Ն. Օռլովսկի) եւ Ղազախստանի
Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ՌՎՎՎ, Ա. Մ. Կուրբայ)՝ ապրանքները, արտաքին
տնտեսական գործառնությունները եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային
չափանիշների ցանկը եւ դրա կիրառման կարգն օգտագործել՝ ռիսկերի
կառավարման համակարգը կիրարկելիս:

4. Ռուսաստանի ԴՄԾ-ին, Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին և Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՎԿ-ին՝ ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները և անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկն օգտագործել որպես սահմանափակ տարածման տեղեկատվություն:

Նախագահ՝

Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝

Մ. Տ. Յեսենբաե

Բելառուսի Հանրապետության

Ս. Վ. Բորիսյուկ

ՊՄԿ-ի նախագահի տեղակալ,

Միավորված կոլեգիայի անդամ

Հավելված թիվ 1

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի 8/7 որոշման

**Ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եւ անձանց
ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկը**

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
01՝ ԱՏԳ-ի մասնակից	
1	Այն փոխադրողի մասին տեղեկությունների առկայություն, որի առնչությամբ ստացվել է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները չառաքելու մասին հաղորդագրություն
2	Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի վարումը վարորդի կողմից, որն իրականացնում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների տեղափոխում, որոնց առնչությամբ նշանակման վայրի մաքսատնից ստացվել է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները չառաքելու մասին հաղորդագրություն
3	Ապրանքների փոխադրումը ստացողին, որի հասցեին նախկինում ուղարկվել են «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, եւ որոնց առնչությամբ նշանակման վայրի մաքսատան կողմից ուղարկվել է դրանք չառաքելու մասին հաղորդագրություն
4	Ապրանքները «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու նպատակով անձի կողմից նախկինում օգտագործվել է ՄՃՓ գրքույկ, որը համարվում էր գողացված (կորած) կամ այն օրվանից ուշ ձեւակերպված, որով սույն ՄՃՓ գրքույկը կարող է ներկայացվել ուղարկող մաքսային մարմին
5	Անձի կողմից «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով այն ապրանքները Մաքսային միության անդամ պետությունների տարածքով երրորդ երկրներ տեղափոխելու փաստերի հայտնաբերումը, որոնք ունեն Մաքսային միության անդամ պետություններում ներքին սպառման համար նախատեսված ապրանքների հատկանիշներ (ապրանքի վրա Մաքսային միության անդամ պետությունների սերտիֆիկացման նշանների, արտադրատեսակների անձնագրերի, Մաքսային միության անդամ պետությունների պետական լեզուներով պիտակների եւ մակնշման առկայությունը)

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
6	Առկա են ապրանքների հայտարարագրման ֆիզիկական ծավալները ԱՏԳ-ի մեկ սուբյեկտից, որի նկատմամբ նախկինում անցկացվել է մաքսային հսկողություն, ինչի կապակցությամբ այն դադարեցրել է իր գործունեությունը (այդ թվում՝ իր նկատմամբ ստուգիչ միջոցառումների անցկացման արդյունքում) ԱՏԳ-ի մեկ ուրիշ սուբյեկտին վերաբաշխելու հատկանիշներ
7	Անձը նախկինում ենթարկվել է վարչական եւ (կամ) քրեական պատասխանատվության Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության խախտման առնչությամբ
8	ԱՏԳ-ի մասնակցի՝ մաքսային հսկողության ձեւերի եւ ռիսկերի նվազեցման եւ այլ, այդ թվում՝ ռիսկերի պրոֆիլներով նախատեսված միջոցառումները կիրառելուց խուսափելը՝ ապրանքների հայտարարագիրը (ԱՀ) հետ կանչելու, ապա ապրանքների այդ նույն խմբաքանակի համար ԱՀ ներկայացնելու եղանակով
9	Առկա են ապրանքների հայտարարագրման ծավալների փոփոխման հատկանիշներ մաքսային հսկողության ուժեղացման (ՎԻ-ի վերաբերյալ գործի հարուցման, ՄԱՃ-ի անցկացման եւ նմ.) արդյունքում՝ ԱՏԳ-ի մասնակցի կողմից ապրանքների հայտարարագրման տեղի փոփոխության դեպքում
10	ԱՏԳ-ի մասնակիցը դիմում է մաքսային օրգաններ ապրանքների եւ միջազգային տեղափոխման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) իրականացնելու նպատակներով առավելապես հանգստյան եւ (կամ) տոն օրերին կամ
11	ԱՏԳ-ի մասնակցի կողմից տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային մարմնի գործունեության տարածքում որոշակի ժամանակահատվածի ընթացքում չի անցկացվել մաքսային հսկողություն
12	ԱՏԳ-ի մասնակցի կողմից ապրանքի համար տեխնիկական փաստաթղթեր ներկայացնելու հրաժարումը
13	Մաքսային վճարների կատարումն ուշացնելու հետեւանքով մաքսային վճարների եւ տույժերի վճարման մասով առաջացած պարտքի, Մաքսային միության օրենսդրությունն ու Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունը խախտելու հետեւանքով վարչական տուգանքների առկայությունը
14	Կազմակերպության կանոնադրական կապիտալը ձեւավորվել է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված նվազագույն չափերով, կամ արտաքին տնտեսական գործառնությունների ծավալը (պայմանագրերի արժեքը) զգալիորեն գերազանցում է կազմակերպության կանոնադրական կապիտալի չափը (500 եւ ավելի անգամ)

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
15	Կազմակերպության՝ ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) իրականացնելիս նշված վավերապայմանները չեն համընկնում Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան իրավաբանական եւ ֆիզիկական անձանց տվյալների բազաներում ներառված վավերապայմանների հետ
16	ԱՏԳ-ի մասնակցի գործադիր մարմինը տեղակայված չէ պետական գրանցման հասցեում
17	ԱՏԳ-ի մասնակիցը կիրառում է հարկման պարզեցված համակարգ
18	Ապրանքների բացթողումից հետո անցկացված մաքսային հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների առկայություն
19	Վերջին ֆինանսական տարվա ընթացքում կազմակերպությունը չի ներկայացնում հաշվետվություններ (հաշվեկշիռներ) տարածքային հարկային մարմիններ կամ ներկայացնում է հաշվետու ժամանակահատվածի համար տնտեսական գործունեության բացակայության մասին տեղեկանքներ կամ այսպես կոչված «զրոյական» հաշվետվություններ (հաշվեկշիռներ) կամ մի քանի հարկային ժամանակահատվածների ընթացքում հարկային հաշվետվության մեջ արտացոլում է վնասներ
20	Գլխավոր հաշվապահի գործառնությունները վերապահված են կազմակերպության ղեկավարին
21	Հիմնադիրը (կազմակերպության հիմնադիրներից մեկը) ԱՏԳ իրականացնող միաժամանակ երկու եւ ավելի կազմակերպությունների հիմնադիր է
22	Ղեկավարը կամ գլխավոր հաշվապահը համատեղության կարգով համարժեք պաշտոններ է զբաղեցնում զգալի թվով կազմակերպություններում (ղեկավարի համար՝ 3-ից ավելի, գլխավոր հաշվապահի համար՝ 5-ից ավելի)
23	Մաքսային ներկայացուցիչների հետ պայմանագրի բացակայության դեպքում իրավաբանական անձի կազմի մեջ առկա չէ այն որոշակի խմբի հաստիքային աշխատակիցների կամ աշխատակցի հատուկ ստորաբաժանումը, ում պաշտոնեական պարտականությունների մեջ մտնում է մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) իրականացնելը
24	Կազմակերպության պետական գրանցման հասցեն մեծ քանակությամբ (10 եւ ավելի) կազմակերպությունների գրանցման վայրն է (բացառությամբ գրասենյակային կենտրոնների, քիզնես-կենտրոնների)
25	Կազմակերպությունը սեփականատերը չէ այն շինությունների, որտեղ տեղակայված է իր գործադիր մարմինը, ընդ որում, վարձակալման պայմանագիրը կնքված է մինչեւ 1 տարի ժամկետով կամ սահմանված կարգով գրանցված վարձակալման պայմանագիրը բացակայում է

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
	Կազմակերպությունը պահեստային օգտագործվող եւ արտադրական շինությունների սեփականատերը չէ, ընդ որում, բացակայում է սահմանված կարգով գրանցված վարձակալման պայմանագիրը
26	Պարտադիր աուդիտին ենթակա անձանց մոտ չի անցկացվել աուդիտորական ստուգում, կամ ստուգման արդյունքների հիման վրա աուդիտորական եզրակացությունը պարունակում է անվերապահորեն դրական եզրահանգումներից տարբերվող եզրահանգումներ
27	Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ բյուջե հարկեր վճարելու մասով պարտքի առկայություն
28	ԱՏԳ-ի մասնակիցը պատկանում է այն ապրանքները տեղափոխող անձանց կատեգորիային, որոնց մաքսային հսկողությունը բացթողումից հետո անհնար է պետական գրանցման վայրի բացակայության պատճառով եւ (կամ) ԱՏԳ-ի մասնակիցը խուսափում է ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն անցկացնելուց մաքսային մարմնի կողմից պահանջվող փաստաթղթերը եւ (կամ) տվյալները չներկայացնելու (ամբողջական ծավալով չներկայացնելու) միջոցով
29	Մաքսային միության անդամ պետությունում ԱՏԳ-ի մասնակցի կողմից արտաքին տնտեսական գործունեության իրականացման ժամկետը չի գերազանցում որոշակի ժամանակահատված
30	ԱՏԳ-ի մասնակիցը առաջին անգամ է դիմում Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմիններ ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների առնչությամբ մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) իրականացնելու համար
31	Հարկային մարմիններում կազմակերպությունը բազմիցս հաշվառումից հանելը եւ հաշվառման կանգնեցնելը՝ կազմակերպության գտնվելու վայրի փոփոխության հետ կապված (հարկային մարմինների միջեւ «միգրացիա»)
32	Մաքսային մարմնում առկա են ԱՏԳ-ի մասնակցին այն ապրանքների արտահանման եւ ներմուծման համար անհրաժեշտ թույլատրման փաստաթղթեր ստանալը մերժելու մասին տեղեկություններ, որոնց վրա արգելքներ եւ սահմանափակումներ են տարածվում
33	ԱՏԳ-ի այն մասնակիցը, որի առնչությամբ առկա են հնարավոր հակաիրավական այն արարքների վերաբերյալ տեղեկություններ, որոնք ուղղված են խախտելու համար արգելքներն ու սահմանափակումները, ինչպես նաեւ մտավոր սեփականության իրավունքը
34	ԱՏԳ-ի մասնակիցը չի ներկայացնում ապրանքի նշանակության, կիրառման ոլորտի եւ դրա տեխնիկական բնութագրերի մասին տեղեկություններ
35	ԱՏԳ-ի մասնակիցները, որոնց առնչությամբ առկա են ապրանքների մաքսային հայտարարագրերը հետ կանչելու մասին տեղեկություններ

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
36	Ապրանքները տեղափոխող ԱՏԳ-ի մասնակիցները թույլատրման փաստաթղթերի բնօրինակները ունեցողները (ստացողները) չեն
37	ԱՏԳ-ի մասնակիցներ, որոնք տեղափոխում են ապրանքներ առանց արտադրողի հետ նրա անունից սահմանափակումների պահպանման, ինչպես նաև տվյալ սահմանափակումները պահպանելու պատասխանատվության հետ կապված գործունեություն իրականացնելու մասին պայմանագիր ունենալու
38	ԱՏԳ-ի մասնակիցները՝ սահմանափակումները պահպանելու հավաստման ենթակա ապրանքներ ներմուծողները, որոնք մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) են իրականացնում սույն ապրանքների առնչությամբ՝ պետական գրանցման վայրից տարբեր շրջաններում
39	ԱՏԳ-ի մասնակիցը մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) իրականացնելու նպատակներով նախկինում ներկայացրել է անվավեր կամ կեղծ թույլատրման փաստաթղթեր
40	ԱՏԳ-ի մասնակցի կողմից լիազորված բանկ որպես հաստատող փաստաթուղթ այն ԱՀ-ի պատճենը ներկայացնելու մասին տեղեկությունների առկայությունը, որի մասին տեղեկությունները բացակայում են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների տվյալների բազայում
41	ԱՏԳ-ի մասնակիցը ապրանքային նշաններով մակնշված, մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրի մեջ ներառված ապրանքները ներմուծող լիցենզավորված անձ կամ լիազորված իրավատեր չէ
02՝ Փաստաթուղթ	
42	Տրանսպորտային բեռնագրում ուղարկողի եւ փոխադրողի դրոշմակնիքների (կնիքների) օրիգինալ դրոշմվածքների բացակայություն
43	Տրանսպորտային եւ առետրային փաստաթղթերում ուղարկողի եւ/կամ փոխադրողի կողմից չհաստատված ջնջումների եւ ուղղումների առկայություն
44	Մաքսային նպատակներով ներկայացված փաստաթղթերում ներառված են թերի եւ (կամ) հակասական տվյալներ, ինչպես նաև իրենց հավաստիության վերաբերյալ կասկած հարուցող տվյալներ
45	Տրանսպորտային եւ ապրանքներն ուղեկցող փաստաթղթերում բացակայում են Մաքսային միության մաքսային սահմանի անցակետերում տեղակայված մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դրոշմակնիքների ու կնիքների օրիգինալ դրոշմվածքները եւ/կամ նշումներն ու ստորագրությունները
46	Ապրանքի հետ ժամանած ապրանքաուղեկից կամ առետրային փաստաթղթերում փոփոխություններ կատարելը կամ փաստաթղթերի փոխարինումը

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
47	ԱՀ ներկայացնող անձի լիազորությունները հաստատող անվավեր կամ կեղծ փաստաթղթեր ներկայացնելը
48	Առեւտրային փաստաթղթերում առկա ստորագրությունները տարբեր են միեւնույն անձանց՝ այլ փաստաթղթերում առկա ստորագրություններից
49	Առեւտրային փաստաթղթերը (ինվոյսները, հաշիվ-ապրանքագրերը եւ նմ.) ստորագրված են ապրանքի վաճառող չհանդիսացող անձի կողմից
50	Ապրանքաուղեկից եւ ապրանքատրանսպորտային փաստաթղթերում ապրանքների կոնկրետ նկարագրության բացակայություն կամ ապրանքների ոչ միանշանակ նկարագրության առկայություն
03՝ Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներն ու երթուղին	
51	Ապրանքաուղեկից փաստաթղթերում նշված ապրանքի քաշը տարբերվում է ապրանքի քաշից, որը հաշվարկվում է ապրանքով բեռնված միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի փաստացի քաշից միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի տեխնիկական փաստաթղթերում նշված քաշը հանելու եղանակով
52	Ապրանքաուղեկից փաստաթղթերում նշված՝ ապրանքի քաշը տարբերվում է այդ նույն տրանսպորտային միջոցով իրականացված նախորդ մատակարարումների ապրանքաուղեկից փաստաթղթերում նշված՝ ապրանքների քաշից
53	Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի բեռնային բաժանմունքի ամբողջականության վնասված լինելը
54	Բեռնային բաժանմունքների վրա կապարակնիքների բացակայություն կամ դրանց խախտված լինելը կամ մակնշման՝ փոխադրողի (բեռնառաքողի) կողմից ներկայացված փաստաթղթերում նշված մակնշումից տարբեր լինելը
55	Ապրանքների երթուղին տնտեսապես նպատակահարմար չէ
56	Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի բեռնումը տրանսպորտային միջոցի եւ (կամ) բեռնարկի բեռնատար հատվածամասի ծավալի 50%-ից պակաս տեղափոխվող ապրանքներով
57	Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի բեռնման ժամանակ վարորդի ներկա չգտնվելու մասին CMR-ում նշումի առկայություն
58	Մաքսային միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխում փոխադրման պայմանագրով որոշված տրանսպորտային միջոցի տեսակից տարբերվող տրանսպորտային միջոցով (օրինակ՝ ապրանքը տեղափոխվում է ավիափոխադրման մասին պայմանագրի շրջանակներում, սակայն փաստացի ժամանում է Մաքսային միության անդամ պետության տարածք ավտոտրանսպորտային միջոցով)
59	Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցում առկա են քողարկված լրացուցիչ հատվածամասեր, որոնք նախատեսված չեն միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
60	Ապրանքի փոխաբեռնում տրանսպորտային միջոցի մեկ տեսակից մեկ այլ տեսակի վրա եւ դրա տեղափոխում Մաքսային միության մաքսային սահմանով երրորդ երկրներ ոչ շահավետ պայմաններով («կեղծ տարանցման» ռիսկ)
61	Արտահանման մաքսատուրքին ենթակա ապրանքների արտահանում մի երկիր, որն ունի այդ մաքսատուրքի վճարման գծով առանձնաշնորհումներ («կեղծ արտահանման» ռիսկ)
04՝ Ապրանքային խմբաքանակ	
62	Ապրանքների հայտարարագրման համար ներկայացում մաքսային մարմին, որը տարբեր է ուղարկող մաքսային մարմնի կողմից նշված նշանակման մաքսային մարմնից
63	Ապրանքների հայտարարագրումն իրականացվում է մաքսային մարմնին, որը տարբեր է մաքսային տարանցման մաքսային ընթացակարգը եզրափակած մաքսային մարմնից
64	Միջազգային փոխադրման նույն տրանսպորտային միջոցում եւ/կամ նույն խմբաքանակում միաժամանակ տեղափոխվում են ապրանքներ, որոնցից որոշները պատկանում է ռիսկ պարունակող ապրանքներին, մյուսները՝ քողարկող ապրանքներին
65	Միջազգային փոխադրման նույն տրանսպորտային միջոցում միաժամանակ տեղափոխվում են ապրանքներ, որոնք տարբեր պահանջներ են ներկայացնում տեղափոխման պայմաններին (օրինակ՝ ջերմաստիճանային ռեժիմը եւ նմ.)
66	Միջազգային փոխադրման նույն տրանսպորտային միջոցով արտահանվում են մի քանի ապրանքային խմբաքանակներ, որոնք հայտարարագրված են մի քանի ԱՀ-ներով, ընդ որում, դրանցից մեկի նկատմամբ սահմանված են արտահանման մաքսատուրքեր
05՝ Գործարք	
67	Փոխադրողի նախաձեռնությամբ ապրանքը ստացողի վավերապայմանների փոփոխություն ապրանքների՝ Մաքսային միության անդամ պետության տարածք ժամանելուց հետո
68	Արտաքին տնտեսական պայմանագրի մասով վճարումներն իրականացվում են օֆշորային գոտիներում գտնվող բանկերի միջոցով
69	Արտաքին տնտեսական գործարքի կողմերից մեկը գրանցված է օֆշորային գոտում, կամ գործարքն իրականացվում է օֆշորային գոտու ռեզիդենտի հանձնարարությամբ
70	Ապրանքների ծագման երկրի ուղարկող երկրից տարբեր լինելը, եթե ապրանքներն ուղարկվում են մերձբալթյան կամ այլ սահմանամերձ երկրներում տեղակայված պահեստներով
71	Արտաքին տնտեսական պայմանագրում նշված՝ ապրանքների առաքման պայմանների կամ գործարքի այլ էական պայմանների անհամապատասխանությունը ապրանքաուղեկից փաստաթղթերում

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
	(հաշիվ-ապրանքագրերում, արտահանման հայտարարագրերում եւ այլն) նշված նույնանման տվյալներին
72	Արտաքին տնտեսական գործարքի կողմերը փոխկապակցված անձինք են
06՝ Ապրանք	
73	Տարբերություն ուղարկող մաքսային մարմնից ստացված ուղարկված ապրանքի, ԱՀ-ի կամ ՄՃՓ գրքույկի մասին էլեկտրոնային ծանուցման մեջ պարունակվող տվյալների ԱՀ-ում ներկայացված տվյալներից, եթե նշված տարբերությունները կհանգեցեն վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի մեծության փոքրացման կամ արգելքներ եւ սահմանափակումներ կիրառելուց խուսափելուն
74	Տեղափոխվող ապրանքների զտաքաշի ոչ բնորոշ հարաբերակցությունը համաքաշին
75	Ապրանքի միավորի քաշը կամ ցանկացած քանակական բնութագիր բնորոշ չէ տվյալ ապրանքի կամ նույնական, համանման ապրանքներին, նույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքին
76	Այն ապրանքները, որոնք հայտագրվում են որպես ԱՊՀ մասնակից երկրներից ծագող եւ որոնց Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս տրամադրվում են սակագնային առանձնաշնորհումներ (եթե կան տեղեկություններ, որ այդ ապրանքները չեն արտադրվում կամ դրանց ծավալները գերազանցում են արտադրական հզորությունը)
77	Այն ապրանքները, որոնք հայտագրվում են որպես զարգացող կամ նվազագույն չափով զարգացած երկրներից ծագող եւ որոնք ներմուծելիս Մաքսային միության անդամ մաքսային տարածք տրամադրվում են սակագնային առանձնաշնորհումներ (եթե կան տեղեկություններ, որ այդ ապրանքները չեն արտադրվում կամ դրանց ծավալները գերազանցում են արտադրական հզորությունները)
78	Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ապրանքների առնչությամբ միջազգային պայմանագրերով մաքսատուրքերի, հարկերի վճարման մասով տրամադրվում են արտոնություններ
79	Արտաքին տնտեսական պայմանագրերին համապատասխան ներմուծված ապրանքները, որոնք տարբեր են առուվաճառքի պայմանագրերից, հայտարարագրում են ներքին սպառման համար
80	Ապրանքները, որոնք կարող են օգտագործվել որպես քողարկման ապրանք այն ապրանքների համար, որոնց նկատմամբ կիրառվում են հատուկ տեսակի մաքսատուրքեր
81	Ապրանքների հայտագրված բնութագրերը, որոնք ազդում են դրանց ներմուծման ժամանակ գանձվող ակցիզների մեծության վրա, սահմանային են ակցիզների դրույքաչափերը կիրառելու համար
82	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով հայտագրվող ապրանքները, որոնց վրա չեն

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
	տարածվում են արգելքներ եւ սահմանափակումներ, որոնք սակայն հավանականության բավարար աստիճանով (հաշվի առնելով իր նշանակությունը, բնութագրերի եւ արտաքին տեսքի նմանությունը) կարող են հայտագրվել այն ապրանքների փոխարեն, որոնց վրա տարածվում են արգելքներ եւ սահմանափակումներ եւ որոնց առնչությամբ բացահայտվել են (կամ կան պոտենցիալ) ռիսկեր մաքսային օրենսդրության խախտումների մասով (ռիսկի եւ քողարկման ապրանքներ
83	Որպես օգտագործված ապրանք հայտագրվող ապրանքներ
84	Ապրանքի (փաթեթվածքի) վրա առկա է ապրանքային նշանների կամ հեղինակային իրավունքների օբյեկտների պահպանության մասին նախազգուշական մակնշում (® ապրանքային նշաններ, հեղինակային իրավունքներ) ԱՀ-ում տվյալները չնշելու դեպքում այն մասին, որ ապրանքը պատկանում է մտավոր սեփականության օբյեկտների դասին
85	ՄՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման մեկ ծածկագրի մատնանշմամբ հայտագրվող տարբեր անվանումներով ապրանքները
86	ՄՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման մեկ ծածկագրի մատնանշմամբ հայտագրվող, քանդված վիճակում առաքվող ապրանքներ, որոնց բաղադրամասերը (մասերը) փոխադրման ժամանակ ունեն առանձին փաթեթվածք եւ/կամ պիտակ
87	Բազմաբաղադրիչ ապրանքներ կամ ապրանքներ, որոնց մասերը տարբեր նյութերից են պատրաստված, որոնք հայտագրվում են ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի մատնանշմամբ՝ բաղադրամասերից կամ մասերից մեկի անվանմանը, նյութին, գործառույթին եւ այլնին համապատասխան
88	Ապրանքներ, որոնց նկատմամբ սահմանված են ներմուծման մաքսատուրքերի գրոյական դրույքաչափեր
89	Ապրանքներ, որոնց նկատմամբ մաքսային գործառնություններ իրականացնելիս հավաստի դասակարգման համար անհրաժեշտ է քիմիական կազմի եւ ֆիզիկական հատկությունների մասին փորձագիտական եզրակացություն
90	Ապրանքներ, որոնց ներմուծման ծավալները Մաքսային միության անդամ պետությունների մաքսային վիճակագրության տվյալներին համապատասխան՝ էապես քիչ են Մաքսային միության անդամ պետությունների առեւտրային գործընկերներ երկրների արտաքին առեւտրի արտահանման մասին վիճակագրության տվյալներից
91	Ապրանքներ, որոնք հայտագրվում են հայտարարագրողի կողմից ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի «մնացորդային» ապրանքային դիրքի «մնացորդային» ստորաենթադիրքերում
92	Ապրանքներ, որոնք հայտագրվում են հայտարարագրողի կողմից որպես «մաս», այլ ոչ թե «պատրաստի» արտադրատեսակ
93	Տեղափոխվող ապրանքների անվանացանկում հայտարարագրման կազմի եւ ծավալների փոփոխում

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
07՝ Երկիր	
94	Երկրներ, որտեղից ապրանք ներմուծելիս արձանագրվել են հաճախակի խախտումներ կապված արգելքներն ու սահմանափակումները եւ մտավոր սեփականության իրավունքները չպահպանելու հետ
95	Ապրանքը ուղարկող երկիրը միաժամանակ ծագման երկիր եւ վաճառող երկիրը չէ
96	Երկրներ, որոնց առնչությամբ առկա են նմանակված ապրանքների կամ առանձին ապրանքների արտադրության մասին տեղեկություններ, որոնց համար Մաքսային միության անդամ պետություններում սահմանված են արգելքներ եւ սահմանափակումներ
97	Երկրներ, որոնց առնչությամբ հայտնի են այն արտադրատեսակները պատրաստելու նախատեսվող ծրագրեր, որոնց արտադրության համար անհրաժեշտ են Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս արգելքների եւ սահմանափակումների ազդեցության տակ ընկնող ապրանքներ
98	Վաճառող երկիր (ուղարկող երկիր, նշանակման երկիր) է այն երկիրը, որի նկատմամբ սահմանված են միջազգային օրենսդրությամբ նշանակված պատժամիջոցներ
99	Ապրանքի ծագման երկիր է այն երկիրը, որտեղ ապրանքային նշանի իրավատերը արտադրություն չունի
100	Ապրանքների էական մասը հայտարարագրելու դեպքում վաճառող երկրներ են օՖՅորային գոտիները
101	Ապրանքային նշանով մակնշված ապրանքների համալրող մասերը բեռով տեղափոխում են մի երկիր, որտեղ իրավատերը չունի արտադրություն
08՝ Ապրանքի արժեքը	
102	Ապրանքի ապրանքագնային (պայմանագրային) արժեքը տեղեկատվական նամակներում եւ այլ տեղեկությունների աղբյուրներում նշվածից ցածր է
103	Առկա է էական անհամապատասխանություն ներմուծվող ապրանքի գնի եւ նույնական, համանման ապրանքների, նույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքի գնի միջեւ
104	Ապրանքի մաքսային արժեքի մակարդակի իջեցում ԱՏԳ-ի միեւնույն մասնակցի կողմից մեկ այլ մաքսային մարմնում հայտարարագրված տվյալ ապրանքի արժեքի մակարդակի համեմատ
105	Վճարման առետրային հաշիվներում նշված՝ մատակարարվող արտադրանքի միավորի գինը սահմանված է ոչ բնորոշող եւ կամ ոչ ճշգրիտ մեծություններով
106	«Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների մաքսային արժեքի մակարդակը ցածր է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
	համանման ապրանքների մաքսային արժեքի մակարդակից
107	Առուվաճառքի արտաքին տնտեսական պայմանագրից բացի այն ծառայությունների (շինարարություն, կառուցում, հավաքում, հավաքակցում, սպասարկում կամ տեխնիկական աջակցության ցուցաբերում) մատուցման պայմանագրի առկայություն, որոնց արժեքը համադրելի է հայտարարագրվող ապրանքների արժեքի հետ
108	Մաքսային արժեք ձեւավորելիս գործարքի գնի էական նվազեցումների կամ ներկայացված պայմաններից ուղղակիորեն չկախված նվազեցումների առկայություն
109	Հումքային խմբին չպատկանող պատրաստի արտադրանքի հայտագրված մաքսային արժեքը համապատասխան հումքի գներից ցածր է
110	Ապրանքի գինը չի օգտագործվել ապրանքների մաքսային արժեքը ներմուծվող (արտահանվող) ապրանքների գործարքի գներով որոշելու համար
111	Ապրանքի գինը հայտագրված է պայմանագրի գնի արժույթից տարբերվող արժույթով
112	Փաստաթղթերում (այդ թվում՝ ապահովագրական) հայտնի ապրանքային նշաններով մակնշված ապրանքների համար ցածր արժեքների նշում
09՝ Մաքսային վճարներ	
113	Մաքսային այն վճարների գումարը, որոնք կարող են հաշվարկվել ապրանքները ազատ շրջանառության համար բաց թողնելու դեպքում, էականորեն բարձր է մաքսային վճարների ապահովության երաշխիքի մակարդակից ՄՃՓ գրքույկով մաքսային տարանցման ներկայացման ժամանակ
114	Մաքսանին վճարները կատարվում են երրորդ անձանց կողմից (բացառությամբ մաքսային ներկայացուցիչների) կամ կանխիկ գումարով
10՝ Լիազորված պաշտոնատար անձ	
115	Ապրանքով բեռնված այն տրանսպորտային միջոցների քանակը, որոնց առնչությամբ մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձանց կողմից իրականացվել են մաքսային գործառնություններ, ԺՊՊ-ում գերազանցում են տվյալ ԺՊՊ-ի թողունակության մակարդակը
116	Ժամանակահատվածի ընթացքում ԱՏԳ-ի միեւնույն մասնակցի ապրանքների առնչությամբ միեւնույն մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի կողմից մաքսային գործառնություններ (մաքսային ընթացակարգեր) իրականացնելիս փաստաթղթային հսկողություն անցկացնելը
11՝ ՏՁՀ	
117	Մաքսային միության օրենսդրությունը եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունը խախտելու հատկանիշների բացահայտում ապրանքների եւ միջազգային փոխադրման

Համարը՝ ը/կ	Չափանիշի անվանումը
	տրանսպորտային միջոցների՝ տեսչական զննման համալիրների կիրառման արդյունքում (այսուհետ՝ ՏՁՀ) ստացված ռենտգենային պատկերի եւ ապրանքաուղեկից (առետրային, տրանսպորտային, մաքսային) փաստաթղթերում պարունակվող տվյալների համադրման արդյունքներով
118	Միջազգային փոխադրման միեւնույն տրանսպորտային միջոցում միաժամանակ տեղափոխվում են ապրանքներ, որոնք ենթակա են եւ ենթակա չեն ՏՁՀ-ի օգտագործմամբ ռենտգենային ստուգման
119	Տրանսպորտային միջոցով տեղափոխվում են ռենտգենյան ճառագայթների կլանման բարձր մակարդակով ապրանքներ, ինչը թույլ չի տալիս ՏՁՀ-ի պատկերի վրա նույնականացնել ապրանքները կամ հայտնաբերել թաքնված ներդրվածքներ եւ խողոզներ

Հավելված թիվ 2

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 8/7 որոշման

Ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների կիրառման կարգը

1. Ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկը (այսուհետ՝ Ռիսկի չափանիշների ցանկ) ձեւավորվել է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ռիսկի պրոֆիլներ, ռիսկերի հայտնաբերմանն ուղղված նպատակային մեթոդիկաներ ձեւավորելիս միատեսակ մոտեցում ապահովելու նպատակով, ինչպես նաեւ ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ (այսուհետ՝ ՌԿՀ) մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման համար:

2. Ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների կիրառման կարգը մշակվել է Ռիսկի չափանիշների ցանկն օգտագործելիս Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները կարգավորելու նպատակով:

3. Ռիսկի չափանիշների ցանկն օգտագործվում է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից՝

- ռիսկերի պրոֆիլներ, ռիսկի հայտնաբերմանն ուղղված նպատակային մեթոդիկաներ մշակելիս.

- Մաքսային միության անդամ պետությունների մաքսային

ծառայությունների իրավական ակտերին համապատասխան՝ ռիսկեր հայտնաբերելու համար օգտագործվող տեղեկությունների աղբյուրների վերլուծությունն անցկացնելու ուղղությունները սահմանելիս.

- այն ռիսկերի շրջանակային պրոֆիլներին համապատասխան ռիսկեր հայտնաբերելիս, որոնց բնութագիրը չի ձեւավորվել ռիսկի որոշակի ցուցիչների տեսքով եւ ենթադրում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մոտ համապատասխան եզրակացությունների առկայություն այն մասին, որ փոխադրվող ապրանքների մասին հայտագրված տվյալները կարող են լինել ոչ հավաստի.

- որպես ռիսկերի կիրառվող պրոֆիլների եւ հայտնաբերված ռիսկերի մասին տվյալները համակարգելու համար դասակարգիչ.

- Մաքսային միության շրջանակներում ՌԿՀ-ի առանձին տարրերի (ցուցիչներ, չափեր եւ այլն) միասնականացման համար ուղղություններ ընտրելիս.

- Ռիսկի մակարդակը որոշելու համար ԱՏԳ-ի մասնակիցների գործունեության վերլուծությունն ու գնահատումն իրականացնելիս.

4. Ռիսկի չափանիշների ցանկը գաղտնի տեղեկատվություն է եւ ենթակա չէ հրապարակման այլ անձանց համար՝ բացառությամբ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

5. Օգտագործելով Ռիսկի չափանիշների ցանկը՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինները իրավական ակտերով ձեւավորում են ռիսկերի չափանիշների սեփական ցանկեր, որոնք օգտագործվում են Մաքսային միության առանձին անդամ պետությունում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում լրացնում են Ռիսկի չափանիշների ցանկը ռիսկի հատուկ ոլորտներով: